ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022-2023 ուստարի

ԴԱԿ՝ Լուսինե Մաթևոսյան

Ավարտվեց ևս մեկ ուսումնական տարի ,որի առօրյան և ուսումնական գործընթացը անցավ բազմաբովանդակ աշխատանքների կազմակերպմամբ ,հետաքրքիր միջոցառումների անցկացմամբ,որոնց նպատակը աշխատանքի ուղղվածության խնդիրների իրականացումն է: Այդ խնդիրները նպաստել են մատաղ սերնդի գեղեցիկի,լավի հանդեպ ստեղծագործական մեծ ակտիվության,երեխայի ներաշխարհի զարգացմանը :Երկրի մշակույթի ու պատմության հանդեպ քաղաքացիական պատասխանատվության արժևորման ձևավորմանը:

Մեր աշակերտները սիրով և մեծ պատասխանատվությամբ մասնակցել են ոչ միայն համադպրոցական ,մարզային միջոցառումներին ,այլև ակտիվորեն մասնակցել են առարկայական օլիմպիադաների և համալրել լավագույների ցուցակը :

Բազմաբնույթ աշխատանքներ են կատարվել նաև ԿԱՊԿՈՒ աշակերտներին ուսումնադաստիարակչական աշխատանքներում ներգրավվելու համար ;

Չնայած կատարված ամենօրյա հետևողական աշխատանքների ունեցած հաջողություններին ՝ նպատակամետ աշխատանքներ պետք է կատարվեն դասարաններում երեխաների մեջ այնպիսի որակների ձևավորմանը ,ինչպիսիք են համագործակցելու ընդունակությունը ,աշխատասիրությունը ,կազմակերպվածությունը,ազնվությունը;

Ավելի շատ աշխատանքներ պետք է տարվեն հանդուրժողականության ձևավորման համար,կոնֆլիկտների խաղաղ լուծման և սովորողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական հմտությունների ձևավորման ուղղությամբ :Աջակցել աշակերտների,նրանց ծնողների և ուսուցիչների միջև փոխադարձ վստահության ձևավորմանը :

Աշխատանքի ուղղվածությունը

- Գեղագիտական դտիարակություն

- Աշխատանքային դաստիարակություն

- Էկոլոգիական դաստիարակություն

- Քաղաքացիական ,բարոյական ,ռազմահայրենասիրական դաստիարակություն

- Ֆիզիկական դաստիարակություն

- Ներառական կրթություն

Խնդիրները

1 Դպրոցականների կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպել ՀՀ կրթության վերաբերյալ բարեփոխումների հիման վրա:

2 Գիտելիքների ձեռքբերման նկատմամբ աշակերտների մեջ ձևավորել ու զարգացնել դրական վերաբերմունք:

3 Հետևողական անհատական աշխատանք և հսկողություն տանել <<դժվար >>դաստիարակվող աշակերտների հետ,նրանց ընդգրկել հասարակական աշխատանքներում:

4 Դպրոցականների մեջ բարձրացնել ճիշտ հաղորդակցման,միմյանց հետ կանոնավոր և կիրթ շփման մշակույթը:

5 Աշակերտների մեջ զարգացնել պատասխանատվության զգացում:

6 Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների հաճախումներին,ուսմանն ու կարգապահությանը:Բարձրացնել գիտակցման մակարդակը,գեղագիտական ճաշակը:

7 Հետևողական լինել աշակերտների և գրադարանի անմիջական կապի զարգացմանն ու ամրապնդմանը:

8 Ամրապնդել դպրոց-ընտանիք կապը:

9 Ամրապնդել ազգային ոգին, ազգային նկարագիրը,ուսուցանել ազգագրական երգեր ու պարեր:

10 Աշակերտների մեջ սերմանել հանդուրժողականություն,հավատ ու լավատեսություն:

Աշխատանք աշակերտների հետ

1. Կազմակերպել սովորողների դաստիարակչական,արտադասարանական,արտադպրոցական աշխատանքները,այդ ուղղությամբ համագործակցել դասղեկների հետ:

2. Մասնակցել հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովմանը:

3. Փոխտնօրենի ղեկավարությամբ կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը,միջոցներ ձեռնարկել սոցիալական անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:

4. Սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ և վարվելակերպ,նպաստել նրանց գիտելիքների,կարողությունների և հմտությունների ձևավորմանը,մասնագիտական կողմնորոշմանը,դաստիարակել մարդասիրություն և հայրենասիրություն:

5. Աշխատանք տանել սովորողների վարքի և կուլտուրայի,վարվեցողության նորմերի,կանոնների ապահովման ուղղությամբ,աջակցել դպրոցական ինքնավարությանը,հասարակական վերահսկողությանը:

6. Մասնակցել հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի,սովորողների առաջադիմության և վարքի ընթացիկ վերահսկմանը:

7. Կազմակերպել ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ:

8. Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:

9. Օգնել աշակերտներին ստեղծել հետաքրքիր ակումբներ,միավորումներ,որոնք հանդիսանում են աշակերտական ինքնավարության զարգացնող օղակներ:

10. Օգնել աշակերտական խորհրդի ձևավորմանը,աշխատանքների պլանավորմանը և աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրության պահանջների համապատասխան գործունեությանը:

11. Համագործակցելով փոխտնօրենի ,դասղեկների,ուսուցիչների հետ՝ կազմակերպել սովորողների դաստիարակչական,արտադասարանական,արտադպրոցական աշխատանքները:

Նախատեսված միջոցառումներ և կազմակերպչական աշխատանքներ

Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամանակացույց
Δ.Գիտելիքի,գրի և դպրության օր	ՄԿԱ փոխտնօրեն ,ԴԱԿ	Սեպտեմբեր
Δ.Դասղեկ-դասվարների խորհրդակցություն	ՄԿԱ փոխտնօրեն,ԴԱԿ	
Δ.Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ,կազմավորել դասարանական ծնողխորհուրդ	ՄԿԱ փոխտնօրեն ,ԴԱԿ	Սեպտեմբեր
Δ.Կազմակերպել աշակերտական ինքնակառավարմանն ուղղված աշխատանքներ •ԱԽ-ի ձևավորում •ԱԽ-ի նիստերի գումարում	ՄԿԱ փոխտնօրեն,ԴԱԿ	Սեպտեմբեր
Δ.Դպրոցում գործող արտադասարանական խմբակներում երեխաների ընդգրկում ըստ նրանց նախասիրությունների	ՄԿԱ փոխտնօրեն,ԴԱԿ	

Δ.Մասնակցել ծնողազուրկ ,սոցիալապես անապահով և ԿԱՊԿՈՒ երեխաների ,դաստիարակության և ուսուցման գործընթացին ,նրանց օգնություն ցուցաբերելու աշխատանքներին : Նպաստել համընդհանուր ներառական համակարգի ներդրման գործընթացի իրականացմանը :	ԴԱԿ ,դասղեկներ	Տարվա ընթացքում
Δ.Աշակերտների անձնական հիգենային հետևելու նպատակով ,ուշադրության կենտրոնում պահել դասղեկ-բուժքույր-ծնող փոխադարձ կապը ●<<Անձնական հիգիենա >> <Առողջ միջավայր >>թեմաների շուրջ դասղեկական ժամեր	ԴԱԿ,բուժքույր,դասղեկներ	Տարվա ընթացքում
Δ.<< Ես սիրում եմ իմ երկիրը >> ՀՀ անկախության օրվան նվիրված դաս-միջոցառում ●<<Խաղաղաության բանալին >>խորագրով կավճանկարչության մրցույթ ●Ակտիվ մասնակցություն անկախության օրվան նվիրված դպրոցական և համադպրոցական սպորտային միջոցառումներին	ՄԿԱ փոխտնօրեն ,ԴԱԿ ,դասղեկ-դասվարներ,ֆիզ.ուսուցիչ	Սեպտեմբեր

Δ.Արցախյան երկրորդ պատերազմի հիշատակին նվիրված խոնարհման քայլերթ-մոմավառություն	ՄԿԱ փոխտնօրեն,ԴԱԿ դասղեկներ,ԱԽ	Սեպտեմբեր
Δ.Թարմացնել պատի թերթերը ,ստենդներն ու անկյունները	ԴԱԿ,ԱԽ	Հոկտեմբեր
Δ.Երաժշտության միջազգային օրվան նվիրված դասղեկական ժամեր (երաժշտության դերն ու նշանակությունը սովորողների մոտ գեղագիտական ճաշակի ձևավորման գործում)	Դասղեկներ ,երաժշտ. ուսուցիչ	
Δ.ՈՒսուցչի օր		Հոկտեմբեր
Δ.Թարգմանչաց տոն		
Δ.<<Դարձիր գրադարանի բարեկամ>> Գրադարանավարի օր	ԴԱԿ>դասվարներ ,դասղեկներ	
•<<Գիրքը հոգու հարստություն է >> միջոցառում	Գրադարանավար,ԴԱԿ, դասվարներ,դասղեկներ	Հոկտեմբեր
•Ընթերցանության մրցույթ տարրական դպրոցի աշակերտների միջև		
Δ.<<Այբ>>կրթածրագրի , <<Մեղու>>հայերենի մրցույթ <<Медвежонок>>ռուսաց լեզվի, <<Կենգուրու>>մաթեմատիկական միջազգային մրցույթ	ՄԿԱ փոխտնօրեն,ԴԱԿ	Տարվա ընթացքում

Դ.Տարեցների միջազգային օր Հանդուրժողականության միջազգային օր <<Ներողամտություն, հանդուրժեղականություն>>դաս.ժամ: Դ.Երեխաների իրավունքների միջազգային օր :	ՄԿԱ փոխընօրեն,ԴԱԿ, Դասղեկներ	Հոկտեմբեր-Նոյեմբեր
Դ.Հոբելյանական տարեդարձներին նվիրված միոցառումներ՝ ●Չարենց -125 ●Սայթ Նովա-300 ●Մոնթե Մելքոնյան- 65 <<Պայքարելու իրավունք >>	ՄԿԱ փոխտնօրեն,ԴԱԿ,զինղեկ, Դասղեկներ	Տարվա ընթացքում
Դ.Ա տառի շնորհանդես	Դասվարներ	Հոկտեմբեր-նոյեմբեր
Դ.<<Իմ և քո դպրոցը 60 տարեկան է >> Դպրոցի հոբելյանին նվիրված ,միջոցառման կազմակերպում	ՄԿԱ փոխտնօրեն ,ԴԱԿ	Նոյեմբեր
Դ.<<Տերևների պարահանդես >> Միջոցառումներ նվիրված աշնանաը	Դասվարներ	Նոյեմբեր
Դ.Կենսաբազմազանության պահպանման միջազգային օրվան ընդառաջ <<Մտածիր կանաչ>>բնապահպանական գլոբալ խնդիրների շուրջ կլոր սեղանների և բանավեճերի կազմակերպում	Կենսաբ.ուսուցիչ ,դասղեկներ	Նոյեմբեր-դեկտեմբեր

Δ.Հաշմանդամների միջազգային օր	ԴԱԿ,ԲՄԹ	Դեկտեմբեր
Δ.Երկրաշարժի զոհերի հիշատակի օր Մասնակցություն մոմավառությանը	ՄԿԱ փոխտնօրեն,ԴԱԿ ,դասղեկներ	Դեկտեմբեր
Δ.Շախմատի մրցաշար	Շախմատի ուսուցիչ,ֆիզ.ուսուցիչ	Տարվա ընթացքում
Δ.Ըստ տարիքային խմբերի պարբերաբար կազմակերպել աշակերտների հանդիպումը դպրոցի հոգեբանի հետ :	ԴԱԿ,հոգեբան ,դասղեկներ	Տարվա ընթացքում
Δ.<<Ամանորյա անցուդարձ>>խորագրով միջոցառում տարրական դասարաններում Դիմակահանդես <<Ամանորյա լավագույն ձևավորում >>մրցույթ	ՄԿԱ փոխտնօրեն,ԴԱԿ, Դասղեկներ-դասվարներ ԱԽ	Դեկտեմբեր
Δ.Հայ առաքելական եկեղեցու տոնացույցային օրերի լուսաբանում(Սուրբ զատիկ և Հայտնություն ,Տեառնընդառաջ)	ԴԱԿ,դասղեկ-դասվարներ	Հունվար

Δ.Սովորողների առաջադիմությանը ու վարքին խթանող մրցույթների կազմակերպում ● <<Կիսմայակի լավագույն աշակերտ>> ●<< Տարվա լավագույն աշակերտ>>	ԴԱԿ,ԱԽ	ՈՒստարվա ընթացքում
Δ.Հայոց բանակի օր <<Նվիրյալները>>խորագրով դաս-դասախոսություն	Զինղեկ	Հունվար
Δ.Գրքի նվիրատվության օր Δ.Մայրենի լեզվի միջազգային օր <<Մաշտոցյան գրով անմահացած մայրենի լեզու>>միջոցառում	Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ.	Փետրվար
Δ.<<Գարունը նման է մայրիկիս>> Կանանց միջազգային օրվան,մայրության և գեղեցկությանն միամսյակին նվիրված միջոցառումներ	ԴԱԿ,դասղեկ-դասվարներ	Մարտ
Δ.Պարարվեստի միջազգային օր << Երգը և պարը դասարանի միավորման միջոց>>	ԴԱԿ ,երաժշտության ուսուցիչ.	Ապրիլ
Δ. Ֆրանկոֆոնիա	Ֆրանս.ուսուցիչ,ԴԱԿ	Ապրիլ

Δ.Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր		Ապրիլ
Δ.<<Մասնագիտությունների աշխարհ,կարծրատիպեր և նախապաշարմունքներ>> թեմայով մասնագիտական կողմնորոշման սեմինար-միջոցառում	ԴԱԿ ,հոգեբան	Ապրիլ-մայիս
Δ.Ինքնավարության օր	ԴԱԿ ,ԱԽ	Ապրիլ-Մայիս
Δ.Հաղթանակների զարուն		Մայիս
Δ.<<Նախապատրաստվենք դառնալ աշխարհի և օլիմպիական չեմպիոններ>>համադպրոցական սպորտային խաղերի մրցույթներ	Ֆիզ .ուսուցիչ	Տարվա ընթացքում
Δ.Այբբենարանի տոն Δ.Վերջին զանգ և վերջին դաս	ՄԿԱ փոխտնօրեն ,ԴԱԿ,դասղեկենր	Մայիս
Δ.Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի պատմամշակութային տեսարժան վայրեր	Դասղեկ-դասվարներ	